Իմ խօսակցութեան պաշարը սպառուեցաւ: Մտածեցի հարցնել երեխաների անունները:

— Ինչպէ՞ս է մեծի անունը:

— Հայկ:

— Փոքրինը՞:

— Արամ:

— Իսկ այդ սիրուն աղջկա՞նը:

— Շամիրամ:

— Պատմական անուններ են, — նկատեցի ես, ինքս էլ զարմանալով եմ գիւտի վրայ:

— Թագաւորների անուններ են, — աւելացրեց պառաւը: — Որդիս շատ անգամ պատմում է երեխաներին այդ թագաւորների գործերը, ասում է, որ ամէն մէկը պէտք է գիտենայ, թէ ո՞վ էր իր անուան տէրը:

Տիկինը, ինչպէս երեւում էր, շտապում էր: Առաւօտ էր. տնային գործերը կոչում էին նրան: Մեր թեթեւ խօսակցութիւնը նա աւելի գործնականի փոխեց, ասելով, որ ճանապարհից ու հեռու տեղից ենք եկել, խնդրեց, որ մեր սպիտակեղէնները, թէ իմը եւ թէ Ասլանինը, ուղարկեմ, որ լուանալ տայ, որովհետեւ տանը այդ օրը լուացք չէին լուանալու, եւ աւելացրեց, եթէ կարկատելու մի բան կայ, նոյնպէս ուղարկեմ:

— Ձեր տունն է, եղբայր, — ասաց նա, — մի ամաչէք, ինչ որ պէտք ունէք, կարող էք պահանջել, որպէս ձեր մօրից եւ քոյրից:

Ես շնորհակալութիւն յայտնեցի: Նա հեռացաւ: Երեխաները այժմ հանգիստ էին: Նրանք կարծես մոռացան մեծ եղբօրը, եւ երկուսն էլ ուրախանալով վազեցին կատոի փոքրիկ ձագի ետեւից, որ նոյնպէս վազվզում էր բակում: «Դրանք էլ են սիրում Վանայ կատուներին, որոնց մազերը կայծեր են արձակում», մտածեցի ես:

Թէ մեր կողմերում, թէ այստեղ, հիւրի համար մի առանձին յարգանքի եւ մտերմութեան նշան է համարւում, երբ տանտէրը ցոյց է տալիս իւր տնային տնտեսութիւնը: Այդ պատճառով ես սիրով ընդունեցի պառաւի առաջարկութիւնը, երբ նա հրաւիրեց տեսնելու իրանց տնտեսութիւնը: Նախ տարաւ ինձ մառանը: Դա մի ստորերկրեայ ներքնատուն էր, որ ամառնային սաստիկ տօթի ժամանակ եւս պահպանում էր իր մէջ խիստ ախորժելի զովութիւն: Այստեղ, մի կողմում, կիսով չափ յատակի մէջ թաղուած, մինը միւսի մօտ շարուած էին գինու կարասները: